

## ԿԱՆՈՆԱԳԻՐ

### ԴՊԲՈՑԱՍԻՐԵՑ ԱՐԵՒԵԼԵՇՆ

#### ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Միացեալ ի 4 յունվարի 1878

#### ՆՊԵՏԱՎ

ՀՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏԵԼ.

#### ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

1. Ընկեր կընդունոի ամեն չայ Տնօրին Խորհրդոյ հաւանութեամբ:
2. Ամեն ընկեր կընդունի ընկերակցութեան վկայագիր մի Տնօրին Խորհրդոյ կողմանէ ստորագրեալ:
3. Ամեն ընկեր պարտի ամսական մի բաժնոյ համար վճարել մի գանեկան արծաթ:

4. Ընկերք աւելի քան դմի բաժին կրնան ունենալ:

5. Ընկեր մի որ երեք ամսական յաջորդաբար չվճարէ զրաւոր ազգարարութիւն մի կընդունի, եթէ սոյն ազգարարութենէ մի ամիս յիառ դարձեալ չվճարէ հրաժարեալ կը համարուի:

#### ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՔ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՔ

6. Ընկերութիւնն Պատուոյ Անդամ կանուանէ այն հայագի եւ օտարազգի անձերն, որք բարոյական կամ նիւթական ծառայութեամբ իրաւունք կստանան Ընկերութեան շնորհակալեաց վրայ:

7. Բարեբար կարձանադրուին Ընկերութեան կտակ կամ արտաքոյ կարգի նպաստ մ' ընող անձինք, որիտակը կը դործադրին կտակարարաց կամաց համաձայն:

8. Բարեբարաց անուանց ցուցակն Ընկերութեան վարժարանաց մէջ կը դրուի ի տևու:

#### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԵՐՄԻՒՆՔ

9. Ընկերութիւնն ունի Կեղրոնական ֆողով մի, Տնօրին Խորհրդութիւն մի եւ Ռւսունական Մասնախումբ մի:

#### ԿԵԴՐՈՆԵԿԱՆ ԺՈՂՈՎ

10. Կեդրոնական Ժողովն, որ ի Պօլիս կը դումարի, Ընկերութեան օրէնսդիր եւ համարառու մարմինն է:

11. Կեդրոնական Ժողովն կը բաղկանայ Պօլոյ եւ Ճիւղերու Երեսփոխաններէն:

12. Պօլոյ Երեսփոխանութիւնն 45 անդամներէ կը բաղկանայ դորս Պօլոյ Ընկեր, Կեդրոնական Ժողովոյ Գլւանի եւ Տնօրին Խորհրդոյ կողմանէ պատրաստեալ

ընտրելեաց երկպատիկ եւ սրբագրելի ցանկի մի մէջէն, կընտրեն քուէլից համեմատական առաւելութեամբ:

45. Երեսփոխանաց երրորդ մասն ամեն տարի կը հրաժարի հնութեան կարգաւ, որոյ տեղ նոր ընտրութիւն կը վնի ըստ նախորդ յօդուածոյ:

44. Կեղրոնական ժողովն կը դումարի երեք ամիսն մի անդամ, Յունվար, Ապրիլ, Յուլիս եւ Հոկտեմբեր ամսոց սկիզբներն:

45. Կեղրոնական ժողովն նաև արտարոյ կարդի նիստ կը կազմէ իւր Դիւանին որոշմամբ կամ Տնօրէն Խորհրդոյ եւ կամ տասնեւորունդ Երեսփոխանաց առաջարկութեամբ:

46. Կեղրոնական ժողովն նիստ կը կազմէ Երեսփոխանաց իսկական մեծամասնութեամբ, որոշմանը կը տրուին ժողովոյ ներկայից մեծամասնութեամբ:

47. Կեղրոնական ժողովն դադանի բուէարկութեամբ եւ բացարձակ առաւելութեամբ կընտրէ իւր Դիւանն որ կը բաղկանայ Ատենապետէ եւ Փոխ - Ատենապետէ, Ատենապետէ եւ Փոխ - Ատենապետէ, որոց պաշտօնն կը տեւէ մի տարի:

48. Ամէն Ընկեր իրաւունք ունի Կեղրոնական ժողովոյ նիստերուն ներկայ գոտուիլ իր ունկնդիր:

### ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՈՒՐԴ

49. Տնօրէն Խորհուրդն կը բաղկանայ Խօնն անդամներէ զորս Կեղրոնական ժողովն կընտրէ զաղանի քուէարկութեամբ եւ բացարձակ առաւելութեամբ Թէ Երեսփոխան եւ Թէ ԱՀ ԱՀ Երեսփոխան Ընկերաց մէջէն:

50. Տնօրէն Խորհրդոյ իւր մէջէն կընտրէ իւր Դիւանն, Գանձապետ մի եւ Համարակալ մի:

51. Տնօրէն Խորհրդոյ յանձնուած է Ընկերութեան ամեն գործոց վարչութիւնն, միայն նախառակին նկատմամբ նոր ծեռնարկութիւն մի սկսելէ յառաջ Կեղրոնական ժողովոյ հաւանութիւնն պարտի ստանալ:

52. Ատիպողական պարագայից մէջ Տնօրէն Խորհուրդն իւր պատասխանատուութեամբ կրնայ սկսիլ նոր ծեռնարկութիւն մի Ընկերութեան նկատմամբ, մօտաւորագոյն ժողովոյ զայն հաղորդելու պայմանաւ:

53. Տնօրէն Խորհուրդն իւր ամեն գործառնութեանց համար հաւաքարար պատասխանատու է առ Կեղրոնական ժողովն եւ պարտի երեք ամիսն մի անդամ ժողովոյ ներկայացնել իւր գործառնութեանց տեղեկագիրն եւ Ընկերութեան Ելմտական վիճակն, իսկ տարեգիտոյն այն է ի և Յունվարի ամբողջ տարեկան շրջանի տեղեկագիրն եւ հաշուեցուցակն:

54. Տնօրէն Խորհրդոյ առ Կեղրոնական ժողովն ներկայացուցած հաշուեց եւ Անտուելի քննութիւնն կը յանձնուի Կեղրոնական ժողովին ընտրեալ երեք անդամներէ բաղկացեալ Քննիչ Յանձնաժողովոյ մի:

55. Քննիչ յանձնաժողովոյ ընտրութեան Տնօրէն Խորհրդոյ անդամը չեն կրնար մասնակցել:

56. Տնօրէն Խորհրդոյ անդամը միանդամայն Կեղրոնական ժողովոյ Դիւանի անդամ չեն կրնար լինիր:

27. Տնօրէն Խորհրդոյ եռթն անդամներէ երկուքն առաջին, երկուքն երկրորդ եւ մնացեալ երեքն երրորդ տարին կը հրաժարին հնութեան կարգաւ, եւ նոցա տեղ նոր բնարաւթիւն կը լինի ըստ 19 րդ յօդուածոյ:

28. Եթէ Տնօրէն Խորհուրդն իւր մի անդամին վրայ անվստահ լինի, կրնոյ կեղրոնական ժողովոյ հաւանաւթեամբ պաշտօնէ հրաժարեցնել զայն:

29. Ընկերութեան բովանդակ հասութից առ առաւելն 60% նախառակի դործագրուեան և զանազան ծախուց կը յատկանայ, իսկ 40% հաստատուն դրամադիմոց վրայ կը բարդուի:

30. Տնօրէն Խորհուրդն Ընկերութեան գրամն հանրածանօթ եւ ապահով դրամատանց մէջ կը զետեղէ ի շահնեցումն:

31. Տնօրէն Խորհուրդն դրամատանց հիմ ունեցած դործառնութիւններն կը կատարէ իւր Ատենապետին, Գանձապետին և Համարակալին ստորագրութեամբ, զորս Կեդրոնական ժողովոյ Դիւանն նոյն դրամատանց կը ծանուցանէ պաշտօնապէս:

32. Գանձապետն ուղղակի եւ անհատապէս պատասխանատու է, առ Տնօրէն Խորհուրդն եւ առ Կեդրոնական ժողովն իրեն յանմեռած ամեն արժողութեանց համար:

33. Գանձապետն իւր մօտ երեսուն ոսկին տւելի գումար մի չկրնար պահել:

### ՈՒՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՈՒՄՆԵՐ

34. Ուսումնական Մասնախումբն կը բաղկանայ երեք անդամներէ եւ իւր պաշտօնն երկամեայ է:

35. Կեդրոնական ժողովն սոյն Մասնախմբի կազմութեան համար պետ մի կրնորէ որ իրեն երկու պաշտօնակից սրոշելով կը ներկայացնէ զանմբ Ճողովոյ հաւանութեան:

36. Վարժարանաց վերաբերեալ խնդիրներն Տնօրէն Խորհրդոյ կողմանէ կը յդուին առ Ուսումնական Մասնախումբն որ իւր որոշումներն կը հազրո՞ւէ առ Տնօրէն Խորհուրդն:

37. Այն խնդիրը որոց վրայ Տնօրէն Խորհուրդն եւ Ուսումնական Մասնախումբն անհամաձայն դանուին Կեդրոնական ժողովոյ Դիւանին, Տնօրէն Խորհրդոյ եւ Ուսումնական Մասնախմբին մի խառն նատին մէջ լուծումն կատանան:

38. Ընտրութեանց ժամանակ հրաժարեալ վերընտրելի են:

### ՃԻՒՊ

39. Տնօրէն Խորհուրդն իւր կողմանէ ընտրեալ Ներկայացուցիչներու ծեռօր ձիւգիր կը հաստատէ ամեն տեղ:

40. Ճիւգ մի որ առ նուազն հարիւր անդամ կունենայ Կեդրոնական ժողովոյ մի երեսփոխան ընտրելու իրաւունք կատանայ:

### ԿԱՆՈՒԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵՒՆՔ

41. Կանոնագրութիւնն վերաբննելի է ի 4 Յունիարի 1884, բայց Տնօրէն Խորհուրդն միշտ կրնայ փոփոխութիւններ առաջարկել: